ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք,
☎ 091 700 667
19.հունիսի. 2019թ
Ե/023-19

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Սարահարթ համայնքի ղեկավարի թիվ 55, 56, 57 որոշումները:

Առդիր՝ 3 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՍԱՐՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ 0680 657

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 55

«14» հունիսի. 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ մասով, ՀՀ հողային օրենսգրքի 61, 67 և 68-րդ հոդվածներով ու հիմք ընդունելով հողամասն աճուրդ-վաճառքով օտարելու մասին 14.06.2019թ. N 1 հողամասն աճուրդով վաճառելու արդյունքների մասին N 7 արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողերը օտարել՝

ա) Լոռու մարզ, Սարահարթ համայնքի 0.02917 հա /կադաստրային ծածկագիր 06-097-0127-0114/ հողամասը **57000 (հիսունյոթ հազար)** ՀՀ դրամ արժեքով օտարել Սեդա Ցոլակի Մաղանցյանին:

2. Վերոնշյալ անձի հետ կնքել հողամասի վաճառքի պայմանագիր՝ ապահովելով գույքային իրավունքների պետական գրանցումը:

Սարահարթ համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎԱԳԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳ ԼՈՌՈՒ 068-0 657

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,

ՈՐՈՇՈՒՄ N 56

14.հունիսի .2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ, ԲՋՋԱՅԻՆ ԿԱՊԻ ԿԱՅԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ «ՅՈՒՔՈՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ, 80-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջներով նիիմք ընդունելով Սարահարթ համայնքի ավագանու 10 մայիսի 2019թ. թիվ 25 որոշումը և վարձակալության մրցույթի անցկացման ժամանակ կազմված 14 հունիսի 2019թ. թիվ 8 և 9 արձանագրությունները՝ 06-097-0131-0088 կադաստրային ծածկագրով 0.02 հա էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների «կապի հողեր» գործառնական նշանակության հողամասի համար հայտարարված վարձակալության մրցույթում «Յուքոմ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների «կապի հողեր» գործառնական նշանակության Լոռու մարզ, համայնք Սարահարթ, 7-րդ փողոց, 20 հողամաս հասցեում գտնվող 0.02 հեկտար /կադաստրային ծածկագիր 06-097-0131-0088/ հողամասը բջջային կապի կայանի կառուցման նպատակով, 420 000 (չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ արժեքով վարձակալությամբ տրամադրել «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
2. «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր՝ ապահովելով գույքային իրավունքների պետական գրանցումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՓԻԼՈՅԱՆ

ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ 0680.657

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 57

"18" հունիսի 2019 թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՈՒՅՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՍՆԱԳՈՄԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումամբ, հաշվի առնելով համայնքի ավագանու 12.06.2019թ. N 28 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել Սարահարթ համայնքի ավագանու 12.06.2019թ. N 28 որոշմամբ համայնքային սեփականություն ճանաչված կադաստրային քարտեզի 06-097-0115-0005 ծածկագրով 0.17222 հա արդյունաբերության, ընդերքաօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական հողերի գործառնական նշանակության հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծերի:
2. Սարահարթ համայնքի համայնքային սեփականություն ճանաչված 06-097-0115-0005 ծածկագրով 0.17222 հա հողամասին տրամադրել Սարահարթ համայնք 13 փողոց թիվ 27 հասցեն:
3. Դիմել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն որոշմից ծագող իրավունքների պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:

Համայնքի ղեկավար Ա. ՓԻԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք,
☎ 091 700 667
17.հուլիսի. 2019թ
Ե/049-19

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Սարահարթ համայնքի ղեկավարի թիվ 58 որոշումը:

Առդիր՝ 1 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, գ. Սարահարթ
☎ 091 700 667, 098 700 819

17.հուլիսի.2019թ.

ՈՐՈՇՈՒՄ 58

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով՝

Որոշում եմ՝

1. Սարահարթ համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի (3.2-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2019թ օգոստոսի 30-ին ժամը 14:00-ին Սարահարթի համայնքապետարանում անցկացնել մրցույթ:
2. Մրցույթի անցկացման մասին տալ հայտարարություն https://www.azdarar.am// հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և այդ մասին 2-օրյա ժամկետում տեղեկացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմին:
3. Մրցույթային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել Սարահարթ համայնքի ղեկավարի տեղակալ Սուսան Կիրակոսյանին:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

☎ 091 700 667, 098 700 819

25.հուլիսի.2019թ.

ՈՐՈՇՈՒՄ 59

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ.-Ի ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 48 հոդվածով, հիմք ընդունելով Սարահարթ համայնքի ավագանու 2017թ.-ի հունիսի 14-ի թիվ 13-Ա որոշումը և Սարահարթ համայնքի բնակիչ Նինա Կուրղինյանի դիմումը.

Որոշում եմ.

Սարահարթ համայնքի բնակիչ Նինա Կուրղինյանին որպես հարազատին կորցրած անձ Սարահարթ համայնքի 2019թ.-ի բյուջեի 10/03/01 դասակարգման 4726 հոդվածից հատկացնել 50000 (հիսուն հազար) դրամ:

Համայնքի ղեկավար Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հեռախոս՝ 091 700667
Էլ.Փոստ՝ sarahart.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 60

<<30>> հուլիսի 2019թ.

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԷԼԵՈՆՈՐԱ ԱՇՈՏԻ ԱՂԱՄԱԼՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Էլեոնորա Աղամալյանի 2019 թվականի հուլիսի 25-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, և ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Սարահարթ համայնքի 2-րդ փողոց, 3 փակ. թիվ 7 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Էլեոնորա Աղամալյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 3-րդ եռամսյակի համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Սարահարթ համայնքի ղեկավար՝ Արտյոմ Փիլոյան

Կ.Տ.